

«Թուրփան ղեսֆ է միջամտի, եթե հայերը հարձակվեն Ղարաբաղի վրա»

«Եթե հայերը զանգվածաբար հարձակվեն Լեռնային Ղարաբաղի վրա, Թուրփան ղեսֆ է միջամտի: Այս մասին նա տեղեկացրեց Մոսկվային: Ցանկացած կառավարություն ստիպված է լինի այդպես վարվել»:

Այս հայտնությունը կատարել է «Միլլիյեթ»-ի աշխատակից Ջուհուր Քըրբան, «Լը Սոնդ դիդ-լոմասիկ» ամսաթերթի հուլիսյան համարում, ուր ամբողջ երկու էջ է հասկացված Թուրփանյին «Թուրփան ցնցված է շրջանային բեկումներով» խորագրի տակ:

Հոդվածագիր Արլեն Գրեբը վերլուծում է Թուրփանյի դիրքը եւ նրա ածող շրջանային դերը, նկատի առնելով Մեծավոր Արեւելի եւ Խ. Միության նոր վիճակները: Իր ծավալուն հոդվածի տարբեր բաժիններում՝ «Կենսական համայնություններ», «Արաբական խաղաթուղթը», «Քրդական դիլեման», «Խորհրդային գրավականը», նա խոսում է ժամանակակից Թուրփանյի մասին, մեջ բերելով թուրք այն անձնավորությունների կարծիքները, որոնց հետ ինքը տեսակցել է:

Հայերի եւ Արցախի վերաբերյալ վկայությունը մաս է կազմում «Խորհրդային գրավական»-ի բաժնին: Թուրքական գրեթե բոլոր կազմակերպությունները համաձայն են, որ Թուրփան չափավոր դեր խաղա Խորհրդային Միության հանդեպ, առանց հողային ցանկությունների, առանց միջամտելու Խորհրդային Միության ներքին գործերին: Նույնիսկ, երբ կարմիր բանակը Բաբու մտավ, Թուրփան յկորցրեց իր շրջանայինությունը: Հայաստանի ոտն անգամ լարվածությունը մեղմացավ, երբ թուրք դեսպանը մայիս ամսին այցելեց Երևան:

Այս չափավորությունը խորապես գնահատվում է Մոսկվայի կողմից, որը փառալուծում է երկկողմանի հարաբերությունները խորհրդային մահմեդական հանրապետությունների եւ Թուրփանյի միջեւ: Տաջիկստանի եւ Կրդզստանի նախագահները, դեռ վերջերս, իրար ետեւից այցե-

լեցին Անկարա: «Միլլիյեթ»-ը եւ «Թերթուման»-ը բերքերը տղվում են Ադրբեջանում եւ դրանք ավելի շատ ընթերցող ունեն՝ քան խորհրդային բերքերը: 1988-ի օգոստոսին դեղի Թուրփան մի անգամ բացվեց Բաբուի կողմից: Անցել փակված էր 1937-ից ի վեր եւ այժմ խորհում են մի անգամ բանալ նաեւ Նախիջեւանից: Օդային մի ուղի, շարաքը երկու անգամ Բաբուն կաղում է Պոլսին: Անցյալ աղբյուրի կազմում տեղի ունեցավ խորհրդային թուրք ժողովուրդների երկրորդ համագումարը, որին մասնակցեցին կենտրոնական Ասիայի հանրապետությունների եւ մի շարք ինքնավար հանրապետությունների ներկայացուցիչները: Որոշեցին Կոնգրես կոչվող մի կուսակցություն հիմնել՝ բաղկացած թուրք ժողովուրդներից:

Եւ մի որոշում անցկացրին իրենց այրուքները լաշինական տառերով փոխարինելու, ինչպես Արաբուրի Թուրփան կատարեց: Սա հարթանակ էր Թեհրանի եւ Ռիադի դեմ:

Այսուհանդերձ, ինչպես կարելի է սահմանափակվել եւ չծավալվել: Քեմալն ուզում էր Անատոլիայի շրջանում միասնական մի ազգ ըստեղծել, միաձուլելով թուրքերին ու ֆրեյերին եւ հրաժարվում էր իր սահմաններից շատ հեռուները նայել:

Քրդական հարցի ծագումը եւ թրախոս ժողովուրդների ծագումը խախտում է այն հիմքերը, որոնց վրա կառուցված էր ժամանակակից Թուրփան:

1974-ին, արդեն թուրք բանակը ներխուժում էր Կիլոռու, կղզու թուրք փոխամասնության անունով: Այսօր թուրքական փոխամասնություններն սկսում են արթնանալ Բուլղարիայում, Հունաստանում, ինչպես նաեւ Խորհրդային Միության մեջ եւ Իրանում, ուր աղբյուր են տալ միլիոնից ավելի ազգերներ, նույնիսկ չինական Սինցզյանում: Համարենք երեւան է գալիս թուրքական մի ռեզիդենտ, ուր նախագահ Օզալը «դիտի ցանկար, որ իր երկիրը խաղաք տեսնական եւ մշակութային դեր» եւ արհամարհել արեւմտյան օրինակը, որի մեջ ինքնիրեն է տեսնում: Սակայն այս «վերածննդի ուժակառությունն անգամ չէր միտի փոքրի այս շատ նեղ շրջանակները»: ■